ների ներկայացուցիչները։ Թ. Հ. Արաշիձեի, Մ. Վ. Գաբաշվիլու (Թբիլիսի), Ի. Գ. Կուլիևայի և Ռ. Բ. Հուսեյնովի (Բաքու) զեկուցումներն արծարծում էին լեզվի, գրականության, պատմության և աղբյուրագիտության հարցեր։

Ազվերանի գիտական նստաշրջանին բնորոշ էին մտքերի անկաշկանդ փոխանակությունն ու ակտիվ քննարկումը, որին մասնակցեցին նաև պատմական գիտությունների դոկտորներ Ն. Հ. Հովհաննիսյանը, Ե. Ղ. Սարգսյանը, Ա. Ն. Տեր-Ղևոնդյանը, Շ. Խ. Մեհյանը, բանասիրական գիտությունների թեկնածուներ Մ. Հ. Գոչարը, Գ. Մ. Մուրադյանը և ուրիշներ։

ՆՈՒՐԲԱՐ ՉԱԼՄՏԱՆ
ԱԼԵՔՍԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ԱՐՎԵՍՏԻ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԵՐԿՐՈՐԴ ՄԻՋՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԸ

Հունիսի 3—6-ը տեղի ունեցավ Հայաստանի և Վրաստանի արվեստի պրոբլեմներին նվիրված երկրորդ միջհանրապետական կոնֆերանսը։ Այն կազմակերպել էին ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտը, Վրացական ՍՍՀ ԳԱ Գ. Զուբինաշվիլու անվան արվեստի պատմության ինստիտուտը և Հայաստանի ազգագրության պետական թանգարանը։ Կոնֆերանսը, որի աշխատանքներին մասնակցում էին երկու եղբայրական հանրապետությունների շուրջ 50 գիտնականներ, բացեց ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի դիրեկտոր, ակադեմիայի թղթակից անդամ Ռ. Զարյանը։ Նա նշեց, որ հայ և վրաց ժողովուրդների մշակութային կապերի պատմության տարեգրությունը լի է երկու ժողովուրդների բարեկամությունը վկայող փաստերով էջերով։ Մեր արվեստագետների համագործակցությունը նպաստում է երկու դրկից ժողովուրդների արվեստի էլ ավելի մերձեցմանն ու հետագա զարգացմանը։ Վերջում Ռ. Զարյանը հույս հայտնեց, որ կոնֆերանսը կնպաստի հայ և վրաց արվեստագիտության վերելքին, այն կհարստացնի նոր փաստական տվյալներով, ճշտումներով ու ընդհանրացումներով։

Առաջին պլենար նիստում, որը տեղի ունեցավ Հայաստանի արվեստի աշխատողների տանը, հանդես եկան հայ և վրաց մի խումբ արվեստագետներ, իրենց զեկուցումներում քննելով երկու ժողովուրդների արվեստի մի շարք խնդիրներ։ Հատկապես մեծ հետաքրքրություն առաջացրին արվեստագիտության դոկտոր Ք. Մաչաբելու (Թբիլիսի) և Լ. Բաբայանի (Երևան) զեկուցումները։

Ք. Մաչաբելու զեկուցումը նվիրված էր վաղ քրիստոնեական ժամանակաշրջանի վրացական հուշարձանների, մասնավորապես Սվանեթիում պահպանված բրոնզածույլ բուրվառների քննությանը։ Լ. Բաբայանը խոսեց հայ ազգային ճարտարապետության զարգացման ասպարեզում Ա. Թամանյանի և Ռ. Իսրայելյանի ներդրած մեծ ավանդի մասին և ծանրացավ հայ ճարտարապետության այդ խոշոր երախտավորների ստեղծագործության ոճի ու սկզբունքների վրա։

Այնուհետև կոնֆերանսի աշխատանքները շարունակվեցին ըստ թեմատիկ մասնաճյուղերի՝ հին ու միջնադարյան արվեստի և նոր սովետական շրջանի արվեստի, որոնք ունեցան 7 նիստ։

Հին ու միջնադարյան արվեստի մասնաճյուղում կարդացված զեկուցումների թվումն էին ճարտարապետության թեկնածուներ Մ. Հասրաթյանի ու Ս. Մնացականյանի, արվեստագիտության դոկտոր Ա. Վալսկայայի (Թբիլիսի) և Լ. Զուգասզյանի (Երևան) զեկուցումները։

Քաղաքի ամրոցի ճարտարապետությանը նվիրված զեկուցման մեջ Մ. Հասրաթյանը փաստական հարուստ հենքի վրա հանգեց այն եզրակացությանը, որ այդ ամրոցի ճարտարապետությունը փաստորեն ներկայացնում է միջնադարյան հայ ամրոցաշինության բոլոր հիմնական փուլերը։ Իր զեկուցման մեջ Ս. Մնացականյանը նկատեց, որ Հայաստանի և Վրաստանի միջնադարյան մշակույթների ուսումնասիրությունն ի հայտ է բերում ստեղծագործական որոշակի ընդհանրություններ, ինչպես նաև տարբերիչ առանձնահատկություններ, որոնք բնորոշ են նաև մեմորիալ հուշարձաններին։ Ա. Վալսկայան Դավիթ Գարեջիի ժայռափոր եկեղեցիների որմնանկարների քննությանը նվիրված զեկուցման մեջ ցույց տվեց, որ հիշյալ որմնանկարների հիման վրա հնարավոր է լուծել միջնադարյան քրիստոնեական արվեստի հետ կապված մի շարք կարևոր հարցեր։ «Թարգմանչաց ավետարանի թեմատիկ լուսանցազարդերը» զեկուցման մեջ Լ. Զուգասզյանը նշեց, որ դրանք արվեստագիտական մեծ արժեք ներկայացնելուց բացի հնարավորություն են տալիս տեսնելու XII—XIII դարերը և անցյալի ավանդների միասնությունը։

Նոր ու սովետական շրջանի արվեստի մասնաճյուղում ևս կարդացվեցին մի շարք ուշագրավ զեկուցումներ։ Դրանցից էին արվեստագիտության թեկնածու Մ. Տեր-Սիմոնյանի (Երևան), Ն. Առաքիանու (Թբիլիսի), Ա. Ստեփանյանի (Երևան), Դ. Լեբանիձեի (Թբիլիսի) զեկուցումները։

«Վրացական թեման Արմեն Տիգրանյանի ստեղծագործությունում» զեկուցման մեջ Մ. Տեր-Սիմոնյանը համոզիչ փաստերով ցույց տվեց, որ հայ մեծանուն կոմպոզիտորն իր ստեղծագործություններում բազմիցս անդրադարձել է վրացական թեմային։ Նա կարողացել է արտահայտել դարեր շարունակ կողք-կողքի ապրող երկու ժողովուրդների բարեկամությունը և մարմնավորել հայ ու վրաց երաժշտական մշակույթների օրգանական կապը։ Ն. Ասաքիանին, խոսելով Սովետական Վրաստանի քաղաքների առաջին գլխավոր պլանների մասին, նշեց, որ Վրաստանում սովետական իշխանության հաստատումը, դառնալով վրաց ժողովրդի քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքի սկիզբ, վճռական դեր խաղաց նաև քաղաքաշինության զարգացման գործում։ Այդ պլանների ընդհանուր բնորոշ գիծը, նկատեց նա, գրանց սոցիալական նպատակամղվածությունն է։ Նկարիչ Վանո Խոշաբեկյանի ստեղծագործության քննությանը նվիրված զեկուցման մեջ Դ. Լեբանիձեն նշեց այն զգալի դերը, որ խաղացել է հայ նկարիչը Թբիլիսիի տեղական կենցաղային ժանրի զարգացման գործում 1920—1930-ական թվականներին։ Արևելքի ժողովուրդների մշակութային ժառանգության մեջ, շեշտեց Ա. Ստեփանյանը, հատուկ արժեք ունեն պատմագեղարվեստական բնույթի փաստերը։ Դրանցից են նաև արքայազն Ալեքսանդրի՝ Պարսկաստանում ստեղծված երեք դիմանկարները, որոնցից մեկի հեղինակը հայ նկարիչ Նսայի Ջանշուղազյանն է։

Կոնֆերանսի երկրորդ պլենար նիստում, որը տեղի ունեցավ Հայաստանի ազգագրության պետական թանգարանում (Սարդարապատ), հանդես եկան Հարտարապետության դոկտոր Ա. Թորամանյանը (Երևան), արվեստագիտության դոկտոր Գ. Ալիբեգաշվիլին (Թբիլիսի) և արվեստագիտության թեկնածու Ն. Դիմիտրիադին (Թբիլիսի), որոնք լուսաբանեցին հայ և վրաց արվեստագիտության համար զգալի հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր։ Ցափազանց շահեկան այս կոնֆերանսի արդյունքներն ամփոփեց Հայաստանի ազգագրության պետական թանգարանի դիրեկտոր, պատմական գիտությունների թեկնածու Լ. Բարսեղյանը, որը նշեց նման գիտաժողովների մեծ դերը հայ և վրաց արվեստի ուսումնասիրության գործում։ Կոնֆերանսի մասնակիցները եղան Հայաստանի մի շարք պատմական հուշարձաններում։

ԱՐՏԱՇԵՍ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ